ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2995-Ա «16» հունիսի 2026 թ.

Ն.ԱԴՈՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ.25 ՇԵՆՔԻ Հ.27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Կարեն և Արսեն Միրզախանյանների լ/ա Գագիկ Մինասյանի դիմումը՝ Ն.Ադոնցի փողոցի հ.25 շենքի հ.27 հասցեում գտնվող բնակարանի զբաղեցրած հողամասի սահմանները ճշտելու և հասցե տրամադրելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման հ.0223813 վկայականը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 19.04.2022թ. հ.2279 և հ.2280 վկայագրերը, Արսեն Միրզախանյանի հայտարարությունը, «Կիմ Վահանյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, ղեկավարի պարտականությունները կատարող Մաքսիմ Գաբրիելյանի կողմից տրամադրված Ն/27445-26 գրությունը, ՀՀ կադաստրի տեղակալի հ.ԳՄ/20196-2024 գրությունը, ինչպես նաև ԱՏ-29122025-01-0628 տեղեկանքը:

Քննարկվող հողամասը՝ ծածկագիր /01-003-0203-0204/, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում և այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 7-րդ գոտում:

Տեղագրական հանույթի և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Ն.Ադոնցի փողոցի հ.25 շենքի հ.27 հասցեն նույնական է 01-003-0203-0204 ծածկագրով գույքի հետ, իրենից ներկայացնում է առանձին կանգնած բնակելի տուն, ինչպես նաև քննարկվող հասցեում գտնվող բնակելի տան արտաքին մակերեսով ծանրաբեռնված

հողամասի փաստացի մակերեսը կազմում է 103.0քմ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.0223813 վկայականում ամրագրված է շինության ներքին 79.9 քմ մակերեսը/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 30.01.2026թ. հ.Դ-5677-26 եզրակացությունը, ինչպես նաև 04.02.2026թ. հ.Դ-5677-26 և 03.06.2026թ. հ.Ն/35367-26 գրությունները.

1. Սահմանել, Ն.Ադոնցի փողոցի հ.25 շենքի հ.27 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 103.0քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմների 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Ն.Ադոնցի փողոցի հ.25 շենքի հ.27 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ բնակելի կառուցապատման:
3. Ընդունել ի գիտություն, որ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին կետում նշված 103.0քմ մակերեսով հողամասն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է Կարեն և Արսեն Միրզախանյաններին:
4. Ադոնցի փողոցի հ.25 շենքի հ.27 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել «Ն. Ադոնցի փողոց, հ.22/3 բնակելի տուն» հասցեն:
5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ որոշման հիման վրա տրամադրված անշարժ գույքի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել ՀՀ կադաստրի կոմիտե և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի համապատասխան բաժնին, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին:
6. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

9. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ